

ՄԱՀ ՃԱՐՏԱՐԱՊԵՏ ՊՐՈՖ. ԷԴՎԱՐԴ ՈՒԹՈՒՋՅԱՆԻ (1906—1975)

1975 թվականի հուլիսի 28-ին Փարիզում, իր բնակարանում, 69 տարեկան հասակում, վախճանվեց անվանի և վաստակավոր ճարտարապետ ու քաղաքաշինարար, Փարիզի կերպարվեստի, ճարտարապետության, մեխանիկայի և էլեկտրականության մասնագիտական բարձրագույն դպրոցների պրոֆեսոր-դասախոս, Ճարտարապետների ամերիկյան ինստիտուտի պատվավոր անդամ, Ֆրանսիայի ստորգետնյա քաղաքաշինության համակարգող ու հետազոտող խմբի հիմնադիր և գլխավոր քարտուղար, «Լը Մոնդ սուտերեն» ստորգետնյա քաղաքաշինությանը և տեխնիկային նվիրված հանդեսի հիմնադիր-տնօրեն, Պատվո լեգեոնի ազգային շքանշանի ասպետ պրոֆ. Էդվարդ Ութուջյանը:

Սփյուռքահայ ճարտարապետական միտքը ևս կրեց մեծ կորուստ:

Ճարտարապետ պրոֆ. Էդվարդ Ութուջյանը մեծ վաստակ ունի նաև սփյուռքի մի շարք հայկական եկեղեցիների կառուցման շնորհակալ աշխատանքներում, որոնց համար արժանացել է Հայոց Հայրապետի բարձրը գնահատությանը և օրհնությանը՝ ստանալով ս. Գրիգոր Լուսավորչի Ա կարգի շքանշան:

1975 թվականի հուլիսի 18-ին Հայոց Հայրապետը Մայր Աթոռից «Իր օրհնությունը, ջերմ գնահատանքը և անվերապահ հիացումն» էր հայտնում վաստակաշատ ճարտարապետին՝ նրա մահից տասն օր առաջ:

Այժմ հանգուցյալի հիշատակի առաջ «Էջմիածին» ամսագրի ընթերցողների ուշադրությանն ենք ներկայացնում Հայոց Հայրապետի վերոհիշյալ գեղեցիկ և բովանդակալից օրհնության նամակը՝ որպես բարձրագույն վկայություն ճարտարապետ Էդվարդ Ութուջյանի տաղանդի, վաստակի ու ճաշակի:

«Մեծահարգ տիար ճարտարապետ,

Խոր հուզումով կարդացինք Ձեր 5 հունիս 1975 թվակիր ձեռագիր նամակը, տեղյակ դառնալե հետո թե առողջական պատճառներով ստիպված եք անկողնո ծառայել: Շատ, շատ կցավինք որ այսպիսով չկարողացաք ներկա գտնվիլ այն հոգեզմայլ արարողությանց և հանդիսությանց, որոնք տեղի ունեցան բացառիկ շուքով՝ թե՛ Պուրսոյի և թե՛ Երուսաղեմի մեջ, ուր հոգեկան մխիթարությունը ունեցանք Մեր ձեռքով օրհնելու Ֆրենկյան գերդաստանի դամբարանը և օծելու սուրբ խորանները ս. Հարության տաճարի, բոլորը սքանչելի արգասիքները Ձեր ճարտարապետական տաղանդին և բարձր ճաշակին: Թե՛ Պուրսոյի և թե՛ Երուսաղեմի մեջ Դուք հաջողած եք Ձեր կառուցումներու վրա վավերական կնիքը դնել հայ դասական ճարտարապետության և քանդակագործության հանճարի, մեր օրերուն պատշաճ ոգիով ու լեզվով, ինչ որ բացառիկ արժանիքն է Ձեր ստեղծագործ անձնավորության: Ձեր այս գործերը անկորնչելի արժեքներ են, պարգևված բազմահազարամյա հայ արվեստի գանձարանին:

Ձեզի, մեծանուն վարպետ, Մեր ջերմ գնահատանքը, Մեր անվերապահ հիացումը, Մեր շնորհակալությունն ու օրհնությունը:

Իրապես ցավեցանք որ ի վիճակի չեղաք անձամբ ներկա գտնվելու Պուրսո և Երուսաղեմ: Սակայն գուցե սխալ չէր ըլլար ըսել՝ թե Ձեր բացակայությամբ իսկ, առավել շեշտվեցավ Ձեր իրական ներկայությունը:

Փարիզ երկու-երեք անգամներ փորձեցինք Ձեզի հետ խոսիլ հեռախոսով, սակայն չհաջողեցանք:

Սիրելի ճարտարապետ, սույն Մեր գրով Ձեզի կմաղթենք շուտափույթ և լիակատար ապաքինում և տևական քաջառողջություն: Տակավին Ձեր ուժերու ծաղկումին մեջ եք: Դուք շատ պետք է ապրիք, և պիտի ապրիք, նոր գործերով փառավորելու համար մեր ժամանակներու հայ արվեստը:

«Ողջ լերուք, զօրացեալ սուրբ Հոգւով եւ յաւէտ օրհնեալ ի Տեառնէ եւ ի Մէնջ. ամէն»:

Սիրով և օրհնությամբ՝

ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ»:

Հանգուցյալի թաղման արարողությունը կատարվել է օգոստոսի 5-ին, երեքշաբթի օրը, ժամը 15-ին, Փարիզի հայոց ս. Հովհաննես Մկրտիչ եկեղեցում, տ. Գյուտ եպս. Նագաշյանի նախագահությամբ, ի ներկայության հայ և ֆրանսիացի հոծ բազմության:

Հանգուցյալ ճարտարապետ պրոֆ. Էդվարդ Ութուջյանի անյունն ամփոփվել է Փարիզի Թիե գերեզմանատանը, նրա ընտանեկան դամբարանում:

Հանգիստ նրա ոսկորներին: